



ՀԻՆ ՀԱՒԱՏՔ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Դ.

ԱԽՏԱՐԻ ԿԱՄ ԱՂԹԱՐԻ. - ԼՈՒՍԱԽԱՐԱՅ ՊԱՇՏՈՆ. - Ա. ԱՐԵԳԱԿՆ.

(Տես յէշ 145)

Աստուծոյ անհասանելի էութեան կամ
բնութեան՝ մարդկային մտօց՝ ամենէն ասա
առածամփի բացատրազն՝ Յովէն. Աւետարա-
նի, ըստ « Աստուծած լոյս և » Պատաշին
սրբապիր հեղինակն (Մալէս) Աստուծոյ ա-
րարածոց անդրանիկ կ'ըսէ զլոյս. մարգու հա-
մար՝ յառաջ քան զայն, « խաւար էր ի վե-
րայ անդընդոց և. և եթէ այն անշափ անձեւ
անձանօթ անդընդոց մէջ՝ կար երկրիս սերմն
այլ, այն ասեն յայրութեան՝ երբ աստուծա-
ծային կամբն հրամեց, թէ « Եղիշի Լոյս.
և եղեւ Լոյս » : Լուսոյ, բայց այսպիսի լու-
սոյ (ոչ թանձր նիմեոց և ճրագաց) էութիւնն
ի՞նչ է. — թողարք իմաստասիրաց. բայց մեղ
բաւական է մեր մասաց վկայութիւնն, թէ ար-
գարեւ զերազանց և ամենազնիւ ամենապա-
տուական ամենասիրտանի բան մ'է, իբր կէս
անհիթ կէս նիմեական զյութիւն որոյ ամե-
նէն զգալի և ամենալայելուչ կերպարանք և
բովանդակիչք կ'երեւին մեկ անոնք՝ զօրս յե-
րեսա երկնից միանգամայն կոչեմք Լուսաւորք,
և առանձնակի Աստեղք, Արեգակն, Լուսին,

և այլն։ Ասոնց տեսութիւնն յափշտակէ քիչ
շառ իսկուն միաբը, կամ ինքնին անոնք խօ-
սին մասց՝ աւելի ազդու քան զայլ արարածս.
« Երկինք պատմեն զգործս Աստուծոյ, և զա-
» բարածս ձեռաց նորս պատմէ Հաստատու-
թիւն », որ է բավանդակութիւն Լուսաւորացն.
ըսել է, թէ ամենէն աւելի զգալի կերպավ
զԱստուծած կերպարանող, երեւցնող կամ բա-
ցարարող՝ Լուսաւորքն են, որը իբր անդիմա-
զելի գորութեամբ իրենց և իրենց արարողին
կու ձգեն մարպիան աշքը, միաբը և սիրար :

Փարզ է ընթերցողաց՝ յատաջարանին հե-
տեւանքն. — զմնյող աշաց հետ սողիզ միաբ
և սիրա ունեցող մարդին՝ երբ և աենեւէր զու-
սաւոր՝ կու պաշտէր անոնց և իբր արարիչը,
ինչպէս յետոյ և հիմայ կու պաշտեմք զնա՝
տաճարաց մէջ, իւ ինչպէս՝ ըստ սրասես աս-
տուծաբանն աւետարանին՝ « Լոյս ի խաւարի
անդ լուսաւորէ », և չեմք կը ընալ լուսոց գե-
րազանցութիւնն ըմբռնել, եթէ խաւարին այլ
սիրուր զաղափարն և փորձը չունենամք, զիթէ
ամէն որ՝ գիշերի և ցերեկի փոփոխամբք, կու

տեմնեմք կ'իմանամք որ խաւարն՝ մոլիքն՝ լուսայ ստուերն է, իր ետեւէն կ'երթայ կու պըտրափ, գրեթէ անընդմէջն իր մօտէն. սակայն « խաւարն ոչ եղեւ նմա հասաւ », Այսինքն ոչ երբեք կու զայի կազի խառնուի միանայ անոր հետ. ըստի միշա լոր է, խաւարն միշա խաւար. ճշմարտովթիւնն միշա ճշմարիտ, ստութիւնն մալրովթիւնն միշա ստու և մալր. բայց ինչպէս շուրէն լուսոյ՝ ստուն այլ ճշմարտովթեան մօտ և քոլը զառափ. իմաստունն միշտ կու տեսնէ անոնց զանազանովթիւնը, անիմաստն՝ կու խառնափէ, կու շփոթէ և շփոթի. և այն որ ուղղատս մոտաց՝ պարզ Աստուծոյ հայելի և ցուցակ մ'էր, թիւրատսես մոտաց կ'ըլլայ ցուցանք մի, և փոխանակ պատկերի խսկովթիւն և գոյովթիւն. միով բանիւ աստուածային, և աստուած իսկ: Որչափ շատերու՝ աստեղաց տեսովթիւնն և քննովթիւնն պատճառ եղած է զԱստուած ճանչնալու, աստուածապաշտ ըլլալու, շատոնց (այլ և շատ հին ժամանակէ)՝ զանոնք աստուած կարծելու, և լուսապաշտ կամ աստեղապաշտ ըլլալու. ինչպէս ցուցընէ մեզի պատմովթիւնն հնագոյն ազգիր, Քաղղէացիս, Քարելացիս, Փիւնիկեցիս, նա եւ Եղիսոսացիս, և ինչուան նորայաց Ամերիկայ աւելի կրթուած և հիմայ գրեթէ սպատած ազգերը: Ասոնց մէջ ամենէն հին և նշանաւոր առաջին յիշուածն էր, Քաղղէացին. մինչեւ լուսաւորաց պաշտօնն և մոլար կրօնին ալ՝ որ պարզապէս Աստեղազիտորիւն և Այստարք կամ Աղրարդ կ'ըսուի, անոնց անուամբ Քաղղէուրիշն ըստած է:

Քաղղէից և հին Հայոց երկրին՝ գրեթէ միշոց չկայ. Կորդուաց լերինքն՝ հիւսիսային կողմէն Հայոց են, հարաւէն՝ Քաղղէից. և ասոնց Ուր կամ Հոռ Քաղաքն՝ ուսկից ելաւ Այրահամ երթալու ի Պագեստին, և ուր իր նախնիքն աստեղաց պաշտօն մասուցանէին, անհմանակից է Հայոց Ատրպատականին: Ասոնց մերձաւորովթիւնն, հին ազգաց հասարակ ծանօթովթիւնը և մերազգեաց հետաքրքիր բարդն՝ չին գտուարացըներ զեեզ հասանելու՝ որ մեր նախնիքն այլ շատ կանուի մոլորած ըլլան աստեղաց ուզիդ տեսովթենէն, և հետեած մոլար Աստեղազիտորեան և Աստեղաշաշիուրեան, և Առաւարաց հաւատը ու պաշ-

տօն մատուցած ըլլան: Զայս ճանչնալու պարզ եղանակն է՝ նշանաւոր Լուսաւորներն առանձինն նկատել:

Ա. Ա. Բ. Խ. Գ. Ա. . — Թերեւա միայն կոյրք շիփանան, թէ ըստ բնակիան տեսութեան մարդկան՝ Արեգակն է զիխաւոր Լուսաւորաց, Ակն (աշք) տիկեզերաց կոչուած, զուցէ լու եւ էր ըսեւ՝ Աշք տիկեզերաց յարեկվանի. ուստի բնական այլ է՝ որ ի գերբնականէն մնորթեալ միաք՝ զԱրեգակն աստուած համարէր, կամաց կամաց խոտորելով իր նախնեաց զգացմունքէն. որք զայն իրբեւ ամենէն զգալի յիշեցուցի աստուածութեան զնէին, և անոր նայելով՝ զԱստուած պաշտէին. և ի սկզբանէ՝ ինչպէս մինչեւ հիւմայ այլ՝ յարեւելզ զառնային յարօվթելն. մեր եկեղեցեաց խորանն կամ աւագ խորանն յայտնի կեցած է վկայ բանիս: Հնագունից համար՝ Արեգակն առիթ մ'էր կրօնից, յետոյ պատուելի եղու, և այլ յետոյ պաշտելի. պաշտօնն ուզեց չսեսուած ասենն այլ տեսնել զԱրեգակն. և հնարեց այնոր պատկերը, նախ բնաձեւ, ապա անձնական և մարդաձեւ, յետոյ և առանձինն անուն ասալով՝ իրբեւ զամա աստուծոյ. և այսպէս այլեւայլ ազգը այլեւայլ կերպով կոշեցին. Քաղզեայլ՝ թէլ կամ Բահադ, Ասորեստանեայլ՝ Արուր կամ Ասոր, Պաղեստինու զանազան ազգը՝ թէլինով, Մողոք, Փիւնիկեցիկ՝ Աղոնիս, Պարսկ՝ Միհր, Եղիպատացիկ՝ Ոսիրիս, Յոյնք և Լաափինք՝ Փերոս, և այլն, յեաինքն՝ բաւական զգելով մէկ Արեւ աստուած մի, չորս հինգ այլ ամելցուցեր են, մէկն Արամազգայ որդի, միւսն զարբին Հեփեստոսի, և այլն:

Գալով առ մեր Հայկազոնս, և թողալ յօտար յեղուաց առնուած արեգական անունները (ինչպէս թէնզէկ¹ ի Հրէից), երկու սովորական բառ ունիմք առաջնշեան լուսաւորին, թէ եւ երկուն այլ մի սիկզմն ցուցընեն, Արեւ (Բաշի ի սանակրիս) և Արեգակն, յօրմէ աւելի սովորական Արեգակն. որ՝ ինչպէս ազգեր-ակն՝ ջրոյ բդիումն ցացընէ, սա այլ տաքովթեան և լուսոյ. նոյն իսկ Ար ար-

1. Բառ Աշումիկը. Օրդր. Լոնտ. 1861. Զարմանալի հանդիպութեամբ՝ միջին Ամերիկայ Չորս Ժողովրդուածան լեզուու թէզեկա կոչուի Արեգակն:

մատն՝ ձայնիւ լծորդ է Աւր (օր) և Հուր բառ-
սից. կըրնամք երրորդ՝ գոնէ մերձաւոր՝ ա-
նուն մ'այլ զրել զլրփի։ — Ի՞նչ որ ըլլայ
բառից ծագումն՝ հաւանօրէն հին Հայք ուրիշ
ազգաց պէս՝ նախ զլրփակն պատուած և
պաշտօած պիտի ըլլան՝ յերկինս, իր առե-
րեւոյթ քջանին մէջ, մանաւանդ ծազած և
ծածկուած ատենն՝ ի հորիզոնի. յետոյ բոլո-
րակի ձեւով ներկայած, ասս և մարգակերպ.
հուսկ յետոյ՝ թուի թէ օսարաց նուն կամ
անոնց հետեւած՝ անձնաւոր այլ համարած
են, և այնպէս ձեւացուցած իրենց պաշտօած
տեղերուամ։ — Ի՞նչ կերպարանց արթեց ըն-
ծայած են։ — Եթէ չելք խարուիր, հին վի-
պասանց մեր՝ ցուցընն զնա իրենց « Երկ-
նէր վրդին, երկնէր Երկիր » երգով, որոց
գործակից կ'ըլլայ և Ծովն, որ կ'երկնէ կար-
միրկ Եղագինի մի, ուսկից բոց ու կրակ կ'ել-
նէ, և անոնց միջէն կարմիրկ ու խարտեաշ
Պատանեկի մի կու վազէ կ'ելնէ, բոցեկն
մանրիկ աշշերով, և արեւակերպ։ Այսպէս
կարծեմ հաւասարին և կերպարանէին կամ
զոնէ հնարեին պաշտօնեայք և բանաստեղծք
Հայոց. որոց աւելի նորագոյնցն այն խարտեաշ
պատանեկին անձնաւորեցին կամ ուղիցին
ճանչնալ ի Վահագն, թուն կամ թունորդի
իրենց ամենէն սիրելի թագաւորին և դիցա-
զին, Տիգրանայ, ժամանակացի Կիւրոսի։
Գուցէ և ի Հնդկաց եկած բարեր ի Տարօն՝
այսպէս յարմարուցին իրենց և Հայոց հա-
ւատօք, որց աստուածապէս պատուէին զԱկնի
զերազոյն կրակն, իրրեւ կենաւաստու առեր-
րաց և եղանակաց, որով և զուգէին ընդ Ա-
րեւուա Դիւրին Էր զուգել և զԱկնի ընդ Վա-
հագնի, որ զուրի և Վահակն. և յայտնապէս
կ'ըսէ մեր հին վարզագետաց մէկն՝ Արարտու-
թեան բացատրութեան մէջ։ « Ռմանկ զԱ-
» բեղակն պաշտեցին և Վահակն կոչեցին⁴։ «
Այդ հնդկի Ակնի անուան՝ միթէ չէ՝ համա-
նիշ և լատինն Իցոն։ Հուր, և յոյնն՝ Այ-
ցօց. — Մեր մերձաւորաց վրացոց պատմիչք
կ'աւանդեն, թէ իրենց մէջ Ամերգական և ընդ-
հանուր լուսաւորաց պաշտօնն շատ կանուխ

մտած է, Մըծիիթոսի մահուանէն քիչ վերջը,
որ էր, նոյնպէս ըստ աւանդութեան, Հայկայ
եղբօրորդին։

Աւելի սաոյգ կամ երկրորդ տեսակ արե-
ւապաշտութին՝ յայտնուած է ի Հայու ի-
րեւոյթ Արշակունեաց աէրութեան սկսմամբ. ո-
րոյ նահապեան Վաղարշակ՝ մի և կէս զար
նախ բան զթուական Փրկինն, ուրիշ կրօնա-
կան պաշտամանց կարգաղրաթեան հետ, « Մեր-
» հետան շինեալ յԱրմանիք՝ անդրիս հաստատէ
» Արեգական և Լոռսէն » (Խորեն. Բ. լ.):
յայտ է ուրեմն՝ որ այս անդրիք զիցական կամ
մարգակերպ էին, և որպէս թռւէ՝ կիսաշափ,
այսինքն մինչեւ ի կէս կամ մէջք մարգոյ ձե-
ւացեալ։ Այլ թէ ի՞նչ ձեւ կամ կերպարանց
ունէին՝ չէ յայտ. հաւանօրէն Միհրի գէմք
ունէին, զօր յետոյ յիշելու եմք. որոց պաշտօնն
թէ և ենթազրեմք ի Պարթեաց մոտած՝ բայց
հաւատոյն արգէն կայր ի Հայու կային և
Հայք Արեգակնապաշտոք կամ Արեգակապաշտոք,
ինչպէս կ'ըսաւի մեր զորց լեզուաւ։ — Վաղար-
շակայ թռոնորդոցն ատեն, զօրապետն Բար-
զափրան՝ զաշանց հաստատութեան համար՝
նախ կ'երգնու յԱրեգակն, յետոյ ամենայն
երինաւոր և Երկրաւոր պաշտեթեաց. Նոյնպէս
Արշամ թագաւոր սախէտ զինանու Հրեայ՝
նախ և Երկիր պաշտանել Արեգակն, և (ասա)՝
պաշտել զիուս արբայի ». (Խոր. Բ. ժԲ).
Թռողումք Լարուրնայի ըսածն վասն Եղեսա-
ցոց Արեւ և Լուսին պաշտելուն՝ ասորական
շատուածոց հետ։ — Վերոյիշեալ թագա-
ւորն (Տիգրան) և իր հայրն Արտաշէս, որոց
արեւուան այլ կ'երգնոյր Բարզափրան, ուրիշ
աւարներու հետ յունական կուրեր այլ բերին
և հաստաեցին յայլեւայլ կոզմանս իրենց
աշխարհին, ինչպէս յիշեն Արաթանզելոս և
Խորենացի. անհաւանելի չէ՝ թէ և անոնց
մէջ ըլլային և յոյն Արեգակներ, Ապոլոնի և
Փերսոսի կերպարանօք, կառօք և Երիխարօք։
Յեանոցն (Ճիերուն) գուցէ հին աւանդութեամբ
մի՝ այլ ոչ հին Ոսկեփորիկ² զրիչ մի՝ անուն-

2. Եթէ հայ խելքի և թէ օտարի ծնունդ է. 1288 թռուն զրուած Տօմարի մէջն կայ հետեւեալ
բանս. և Զինչ է նիւթ ամանակի (Արեգակն)։
» — Հուր է բաղազանեալ, աղ է և երկաթ. ըյս

1. Իրեւ դիցազնական անձն՝ յետոյ պիտի
յիշեմք զԱմագն։

ներն այլ նշանակէ , գրելով , « Անուանք վարչաց Արեգական , Էնիկ , Մ'ենիկ , թէնիկ և Սէնիկ » . չփստեմ թէ ֆերոսի կառաց ձիանքն այլ յոյն անուններ ունէին , թէ՝ ասոնք լոկ հայ ինելաց ծնունդ են :

Վերոյիշեալ երզման ձեւն՝ յայտնէ և Արեւու կերանք նշանակելն , որ մնացած է և ի քրիստոնէութեան . բաղրատունեաց թողած արձանագրութեանց մէջ յեկեղեցին՝ շատ հեղ գրուի յիշտառակն՝ յարեւառորդին բարերարաց , այսինքն մաղմանք երկար ապրելու . և մինչեւ հիմայ լուսի երդմանձեւ կամ փաղաք շանօք՝ Արեւու սիրեմ , Երեւ Արեւու , Արեւու մեսնիմ , և այլն . ինչպէս հիներն այլ մեռնելու կամ մեռցնելու համար կ'ըստին զԱրեւ հաւանել , յԱրեւէ արկանել , անկանել , և ասոնց նման բացատրութիւններ . այսպէս՝ անշափահաս կամ երիտասարդ մեռնողն այլ կոչուած է « Արեւառէ գախճանեալ » :

Անցողաբար յիշեցընեմք քննաբանից , որ աստեղապաշտոքն Սարէացիք՝ մերոց պէս Արեւ կամ Ուրու կոչած են զԱրեգակն . գուցէ պատահաբար ինչուան Ովիիանից մէջ Արեգական պաշտօնէից ընկերութիւնն կոչուի Արեգի անուամբ (Arekois կամ Areois) . Բայց մեղի աւելի զիստի են մեր երլիքն մէջ այս լուսաւորին անուամբ կոչուած պլիսայլ տեղեր , մանաւանդ ի Տարօն , ուր և Արեգակնածած բլուրն , և ի Սիրնիս՝ որոյ ամբողջ գաւառ մի Արենիք կոչուի , և պաշտօնն յայնեցաւ յասպէլութեան Ա . Բարդողիմեայ :

Աւելի զիստին եւ զարմանալին է որ Արեւապաշտութիւնն քան զայլ հաւասաւ կերպով մի աւելի երկար և խոր տպաւորուած է յազգայինս մեր , և այլեւայլ ժամանակ երեւցեր են Արեւորդիք , գուցէ մինչեւ հիմայ այլ , եթէ և դրա չորսուին ո՛ր ապօի մաս-

ցորդ ըլլալ . ԺԱ. գարու կիսում Գր . Մազիսարոս՝ այս անուամբ յիշէ զանոնը , և ի Զանզիկ մողուց համարի յառաջ եկած . « Ու մանք ի նոցանէ գեղեալք՝ Արեգակնաւան պաշտք , զոր Արեւորդիյն անուանենք . և ահա են յայցմ գաւառի (Միջազգեանց) բառ զումք , և քրիստոնեայու զինքեանն յայտած նապէս կոչեն . բայց եթէ որպիսի՞ մնորուած թեամբ և անառակութեամբ վարին , գիշեմք զի ոչ ես անտեղեակ » : — իրմէ զար մի վերջը՝ իր Շնորհալի շառափի Ա . Ներսէս՝ Սամասիոյ կողմանց Արեւորդիաց համար յայտնապէս կ'ըսէ , թէ Հայոց սերունդը են , որը « Ոչ կամեցան լուսաւորիլ ասու և առածային լուսովն՝ ի ձեռն Լուսաւորչին մերոյ » . և կու պատուիք քանանայից , որ անոնցիւ կարձի եկողներն ընդունելու ատեն՝ երեսնին յարեւմուաց զարձնելու տան և երեց անզամ մընել յերեսա սատանայի , և խրասել , թէ՝ « զԱրեգակն՝ մի՛ այլ ինչ համարիք՝ քան ո թէ ճրագ աշխարհի , զոր սասեղծ արարիչն Ասու ատած , և եղ զնա յերկինա՝ լուսատու լինել ո երկրի » : Արեւու պաշտօաման կամ պատուց հետ՝ ասոնց Մագիստրոսի յիշած անառակութիւնը՝ քիչ մ'աւելի բացատրէ մեր Ա . Հայրապեան , որով կ'իմացուի Պայլիկեանց և Թոռնակեանց աղանդոց պիղծ հասնուորն այլ ի զործն և ի ծէսո նոցա . մինչեւ իրմէ քիչ մի տուած զրոյ վարդապետն Դաւիթի որդի Ալաւկայ՝ յայտնապէս կ'ըսէ , թէ « Պայլիկեանցն կամ Մծղնայը՝ Արոտիորդց ազգն է » : Երկու զար վերջն այլ՝ ԺԴին կիսում՝ Միկթար կառթողիկոս զրէր առ Պատն Հուոլմայ , թէ այն ատեն այլ զնոնուիին Արեւորդիք ի Մանազկերոտ , որ շատ զարերով այլ յառաջ քան ըզ-Շնորհալին և զՄագիստրոս՝ բյոն էր Թօնրակեան աղանդաւորաց և իրենց նմանեաց :

Ցիշեալ ժԴի զարու վերջերը՝ Հէնկմիմար Մէրսինու կողմերը չորս գեղերու մէջ (Շոլ , Շմբրչախ , Սաֆարի և Մարտափի) Արեւա-

« է շանթախառն , հուր ձեւացիկ , և են ի նման պատուհանք էջ երկբացիկ , որոց ու պատուանն յերկինս հայի և մինին յերկիրս : Եւ եթէ ո կամիցիս գիտել զինչ իցէ կերպարանք Արեգակնաւան . — մարդ է անբան և անիմաստ . կայի » մէջ հրեցէն երկուց երիվարաց լ Եւ եթէ ոչ էր ո յաման ակն արեգականն , երկիրս իրեւ զգը . « զաթ մի բուրդ առաջի նորա վառէր » :

պաշտոներ գտնելով, կու ջանայ զանոնք իր կրօն-քին դարձնել, և չխարնալով՝ « աւերեաց » զքաղաքն, կ'ըսէ Թօմիլա Մ'եծոփեցի պատ-» միշ. և շոր (յիշեալ) գեղ՝ իսպառ կրծա-» նեաց. և յետոյ դարձեալ սատանայի հնա-» բիւք՝ բազմացան ի Մ'երտին և ի յլլմիդ ու: Ասկէ առաջ կու զրէ Մ'սիթար Ապարանեցի. « Են ոմանք Հայիազեանք և հա լեզուա. » Արեապարզք, և կոչին Արեւորդիք. սոքա ոչ » ունիին զիր և զպութիւն, այլ աւանդութեամբ » ուսուցանեն հարքն զորիսն իսրեանց, զոր » նախնիք նոցա ուսեալք էին ի Զրազաշա մո-» դէ՝ անլորուշանին պետէ. և ընդ որ (կողմին) » երթայ արեգակն՝ ընդ այնմ երկրպագեան, » և պատուեն զծան Բւրսի և զՇոշան ծա-» ռ զիին և զբաւեակին և զայրան, որ զիէմ » իւրեանց շրջեցուցանեն ընդպէմ արեգականն. » և նմանեցուցանեն զինքրանս նոցա՝ հաւա-» տով և զործով բարձր և անուշահու. և առ-» նեն մասազ ննջեցելոց. և տան զամե-» նայն հասս Հա երիցու: Սոցա առաջնորդն » կոչի Հազրըրսկեռ. և յիւրաքանչիւք ամի եր-» ու կու անզամ կամ աւելի՝ ամենեքեան այր » և կին ուսուր ե զուտար, ժողովին ի գուր մի » յոյժ խստաբին », և այլն: — Մ'եծոփեցոյն գրեաթէ ժամանակակիցի թշլկուրանցի Յովիկ. Պուէտն և հայրապետ.

« Կինն՝ ոչ պըմպայ յԱրեւորդաց, Ու ի Թուրքէ ոչ է Հացէ. Զով որ սիրէ հաւառն այն է, :

Իսկ Արեւը սիրող բուտց մէջ յիշէ ուրիշ եր-» զիշ ծաղկաբան մի (Դաւիթ Ալյանորցի). « Աինձն, իրիցուկն ու Եպրեակն, կու ըսպառն Արեւոյ. (բուռն. Նոցա երան ուրիշ է, կու չըրին՝ զօրն էնստ արեւուն.՝) Մ'եղի աւելի մօտ զարուց զբողաց մէջ այլ զը-

տուին յիշատակը Արեւորդեաց. մինչեւ հիմայ Մ'իջագետաց կողմերում Շեմսի կողուած ա-» զանգաւորք՝ որ Արեւային ըսել է, հեթա-» նուութենէ, քրիստոնէութենէ և իշլամէ խառն կրօնց մ'ունին. բայց իրենց ազգի ծագումն յայսնի չէ, սեղացեաց լեզուն կու խօսին. իսկ բուն Հայոց երկինսերու մէջ՝ կաղզուանայ կողմերում՝ զեւ լսուին Արեւորդի կամ Ար-» ծուուզի կողուած լերինք՝ Երասմիս և Արա-» ծանուց անջրպետք, ուր Եզիսիդ և արեւա-» պաշտք՝ զոնէ Արեւորդիք՝ մեր օրերու այլ յայտնուած են և յիշուած ի սեղազրողաց, որպիսի է Տեսուէ, (Texier, Asie Mineure, I. 105. 123).

Արեգուկան ներգործութեան մարզկան հա-» մար ամենէն աւելի երկարպատութեան կամ բուսոց ամելութեան համար հարկաւոր ըլլալն յայտնի է, և այնով զրցիլն ի պատի նորա. և որչափ բնական պատճառաւ կոչուած են զա-» նազան բոյսը այնոր անուամբ, կըցնայ զեռ յա-» մանս նշմարիլ և կրօնական ինչ մոռածու-» թիւն. ինչպէս յ'Արեգական մայր, Արեգա-» կան ժամկի, Արեւորդիկ, Արեւածագ, Ա-» րեւածալիկ, Արեւապաշ, և այլն Արգեօք այս-» պիսի ազգեցութեան համար նախնիք իրօք կեն-» դանի էակ մ'այլ կարծէի՞ն զԱրեգակն, կամ իր մէջ կենդանի Էակներ. ինչպէս վերոյ-» գեեալ ծանօթութեան մէջ զուշակով, և ինչ-» պէս ազդարաբան երդմնեցուցի մ'այլ, հա-» ւաստաղով կամ չհաւասալով, հիւանդութիւն-» ները կ'ուցէր կապել նա և ա 365 Արբոլցն՝ » որ կան ի սիրու Արեգականն, (զ) որ ոչ հրեշ-» ու տակը զիսեն և ոչ հրեշտակազետք, բաց միայն Հայր »: — իսկ զու ուստի զիտցար, ո՞վ իսելացնոր. որ՝ սոյնպէս տեսսեր ես անոնց և չսեւած նա և « 365 Առորքի՝ որք կան ի և մէջ ծովուն »:

(Շարայարէլի)